





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» բառերը փոխարինել «դատական ակտը սույն օրենսգրքի 43-րդ հոդվածում նշված անձանց հանձնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-886<sup>1</sup>-27.04.2010-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հարապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝

ա) 207-րդ հոդվածի 1-ին մասի «մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» բառերը փոխարինել «դատական ակտը սույն օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանձնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում» բառերով,

բ) 229-րդ հոդվածի 1-ին մասի «մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» բառերը փոխարինել «դատական ակտը սույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանձնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-886<sup>2</sup>-27.04.2010-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի՝

ա) 379-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի «հրապարակվելու օրվանից հետո» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանձնելուց հետո» բառերով,

բ) 412-րդ հոդվածի 1-ին մասի «հրապարակման պահից» բառերը փոխարինել «դատական ակտը սույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանձնելուց հետո» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-886<sup>3</sup>-27.04.2010-ՊԻ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 118.4-րդ հոդվածի 1-ին մասի «մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» բառերը փոխարինել «դատական ակտը սույն օրենսգրքի 118.2-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանձնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն օրենքների նախագծերի փաթեթը մշակելու համար առիթ է հանդիսացել գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաբնիչ կամ վճռաբեկ բողոքարկման համար ՀՀ դատական օրենսգրքով (40, 42 հոդվածներ), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (124, 140, 207, 2212, 229 հոդվածներ), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (375, 379, 412 հոդվածներ), ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (115, 118.4 հոդվածներ) սահմանված մեկամսյա ժամկետները դատական պրատիկայում խախտելը, այն է՝ հրապարակումից անմիջապես հետո այդ ակտերի (վճռի կամ դատավճռի) օրինակը գործին մասնակցած անձանց չհանձնելը, որի պատճառով այդ անձինք զրկվում են մինչև այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու մեկամսյա ժամկետը լրանալը վերաբնիչ (վճռաբեկ) բողոք բերելու օրենքով սահմանված իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից: Դատական ակտերի օրինակները դրանք բողոքարկելու մեջ շահագրգիռ անձանց հանձնելու ուշացումների կապակցությամբ պրատիկայում առաջանում են վեճեր եւ դժվարություններ, քանի որ վերադաս դատարանները նշված դեպքերում հրաժարվում են վերաբնիչ կամ վճռաբեկ բողոքներն ընդունելուց, եւ անձինք, օրենքի անկատարության պատճառով, փաստորեն զրկվում են դատական պաշտպանության հնարավորությունից: Այս հարցին տարիներ շարունակ անդրադարձել են նաեւ ՉԼ միջոցները:

Փոփոխվող դրույթները վերաբերում են ՀՀ օրենսդրությունը ժողովրդավարացնելու եւ մարդու իրավունքների դատական պաշտպանությունը լիարժեք ապահովելու նպատակ: